№ 44 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 10 — 1899 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 10 № 44

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Ժամանակն է.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Սակաւաջուր տարի Կովկասում. Նամակ Շուլավէրից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նոր աշխարհի կրօնական խնդիրները:

ԺԱՄԱՆԱԿՆ Է

—

Երկաթուղիների կենտրօնական վարչութեան մէջ Պետերբուրգում կազմված է մի յատուկ յանձնաժողով, որ պէտք է նորից քննութեան ենթարկի ապրանքների տեղափոխութեան սակագինը: Շատ ցանկալի է, որ յանձնաժողովը ուշադրութեան առներ Անդրկովկասի շահերը և վերջ դներ այն բացառիկ բարձր գներին, որոնք գոյութիւն ունեն այդ երկաթուղու վրա ապրանքների վերաբերութեամբ: Այդ բարձրը սակագները սահմանված էին այն ժամանակ, երբ երկաթուղու գծի ծախսերը շատ մեծ էին Սուրամի զառիվայրի պատճառով: Այդ սակագները 50%-ով աւելի էին, քան այն, որ գոյութիւն ունի կայսրութեան ուրիշ տեղերում: Սուրամի տօնելը անցկացնելուց յետոյ, երկաթուղին այլ ևս չունի իր առաջվայ անյարմարութիւնները և մեծ ծախսերը, ուստի նրան տրված արտօնութիւնը կորցրել է իր գոյութեան հիմքը և դարձել է մի աւելորդ ծանրութիւն ազգաբնակութեան համար:

Սակագնի թեթևացնելը մանաւանդ կարևոր է այժմ, երբ կովկասեան արդիւնքները սկսել են համաշխարհային վաճառանոց հանվել և ստիպված են եւրօպական արդիւնքների հետ մեծ մրցման մէջ մրտնել: Պէտք է օրինակ վերցնել Ամերիկայից, որն ամեն ջանք գործ է դնում իր արդիւնագործութեան ծախսերը նուազեցնել և վաճառանոց ուղարկել ապրանքները այնպիսի գներով, որ կարողանայ նուաճել այդ վաճառանոցը և յետ մղել բոլոր մրցակիցներին:

Մի օտարոտի երևոյթ դեռ շարունակում է գոյութիւն ունենալ մեր երկրում: Նատ անգամ երկաթուղու գծին կից գտնվող տեղեր իրանց ապրանքները ուղարկում են նոյն երկաթուղու գծի միւս կէտերը ոչ թէ երկաթուղով, այլ սայլերով և բեռներով, աւելի շահաւէտ և ձեռնտու համարելով այդպիսի հնացած ձևը, քան ապրանքների կատարելագործված տեղափոխութիւնը վագոնների միջոցով: Այդ երևոյթի պատճառը մի կողմից թանգ սակագներն են, իսկ միւս կողմից այն աւելորդ ձևականութիւնները, որոնք գոյութիւն ունեն երկաթուղիների վրա և այն յանցաւոր դանդաղկոտութիւնը, որ շատ անգամ յուսահատեցնում է ապրանք փոխադրողներին և ստիպում դիմել հին, թէև անկատար, բայց աւելի ձեռնտու միջոցին:

Եթէ աւելացնենք այդ անյարմարութիւններին և այն հանգամանքը, որ Անդրկովկասեան երկաթուղին առհասարակ աղքատ է այնպիսի վագոններով, որոնք պէտք է տեղափոխեն ոչ թէ նաւթ, այլ տեղական արդիւնագործութեան ուրիշ նիւթեր, օրինակ, գիւղատնտեսական արդիւնքներ, կը նկատենք, որ մեր երկաթուղին չէ կատարում իր դերը բաւարար կերպով և այն չափով չէ նպաստում մեր արդիւնագործութեան զարգացման, ինչ որ կարող էր: Ցոյս կայ, որ այս անգամ մեր երկրի շահերը չեն մոռացվի և կը տրվի նրան կարողութիւն աւելի համարձակ կերպով նուիրվել տեղական արդիւնագործութեան զարգացման:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Ինտելիգենտ երիտասարդութեան և մանաւանդ ուսանողութեան հարցը մեր մէջ ստացել է այն բնաւորութիւնը, որ, սովորաբար, արտայայտվում է «հրատապ» բառով: Մենք, ինչպէս յայտնի է ամեն մէկին, սաստիկ դժգոհ ենք մեր ուսանող երիտասարդութիւնից, դատապարտում ենք նրան ամեն քայլում, որովհետև նա իդէալ չունի, նիւթապաշտ է, եսամոլ, կարիերիստ, սիրահար դարավերջի զուարճութիւնների: Նոյն այդ դանգատները—և աւելի լայն չափերով—տարածված են ռուս հասարակութեան մէջ. և ուրիշ կերպ չէ կարող լինել, քանի որ հայ ուսանողութեան մեծագոյն մասի և ռուս ուսանողութեան համար կրթութեան տաճարները մի և նոյն են—նոյն միջնակարգ դպրոցները, նոյն համալսարանները և բարձրագոյն մասնագիտական դպրոցները: Ինչից է առաջ գալիս ուսանողութեան այդ ընկած դրութիւնը: Սա մի ընդհանուր հարց է, որ պիտի հետաքրքրէ ամենքիս: Եւ «С.-Петербург. Вѣд.» լրագրի մէջ պ. Ն. Պողնեակով փորձում է բացատրել այդ պատճառները: Նա անիրաւացի է համարում ուսանողութեան դէմ ուղղած մեղադրանքները նախ այն հիման վրա, որ միայն ժամանակակից ուսանողութիւնը չէ, որ դժգոհութիւն է պատճառում:

Քառասնական և յիսունական թուականներին երիտասարդութեան մեղք համարվում էր նրա իդէալականութիւնը, վաթսունական և եօթանասնական թուականներին նրան մեղադրում էին նիւթապաշտութեան համար, իսկ ութսունական և իննսունական թուականների երիտասարդութիւնը մեղադրվում է, որ զուրկ է թէ մէկից և թէ միւսից: Ձեն ընդունում թէ նա մի բան արած լինի, մոռանալով, որ այդ իսկ երիտասարդութիւնը այդ ժամանակամիջոցում տուել է մեզ Գարշին, Նադսոն, Կորոլենկո, Չեխով, այնպիսի պրոֆէսորներ, ինչպէս են Վվեդենսկի, Կոտլեարեվսկի, Գրեվս:

Սա, անշուշտ, լաւատեսութիւն է: «Մի ծաղկով գարուն չի լինի» և վերջապէս, բացառութիւնները միշտ կան. չը պէտք է մոռանալ և այն, որ Գարշին, Կորոլենկո, Նադսոն, Չեխով այժմեան ուսանողութեան համար ներկայացնում են «ծերեր», հեռացած սերունդի ներկայացուցիչներ: Մեծամասնութիւնը, ահագին, համատարած մեծամասնութիւնը չէ կարող իրաւացի գանգատ ու դժգոհութիւն չը պատճառել: Այդ չէ ուրանում և յօդուածագիրը: Նա այդ երևոյթի պատճառը որոնում է կրթական սիստեմի մէջ. յիշեցնում է, որ միջնակարգ դպրոցները շատ աղքատիկ պաշար են տալիս երիտասարդութեան, որ բոլորովին կտրված է մնում իրական կեանքից և ամեն ինչ պիտի գտնէ միայն իր չոր ու ցամաք դասագրքերի մէջ: Այնուհետև նա անցնում է համալսարաններին և ասում է.

Մենք, արդէն ծերացող մարդիկս, որ յիշում ենք համալսարանը 25—30 տարի առաջ, երբ նրա դռները լայն բացված էին բոլոր այն մարդկանց համար, որոնք գալիս էին լսելու բարձր գիտութիւնը, մենք գիտենք թէ ինչ համալսարան էր դա, որպիսի ոգևորող տուն էր դա: Այդ ժամանակից համալսարանը նշանաւոր կերպով փոխվել է. միջին կրթութիւնը և համալսարան մտնելու հնարաւորութիւնը սեղմված են չափազանց և դրա համեմատ էլ ցած է ընկել համալսարանի հոգևոր մակերևոյթը:

Եթէ այդ լինէր պատճառը, այն ժամանակ մենք պիտի տեսնէինք մի այլ երևոյթ. երիտասարդութեան մի մասը, այն էլ ոչ բոլորովին աննշան մասը, կրթութիւն է ստանում արտասահմանի բարձրագոյն դպրոցներում. սակայն ինչու այդ մասն էլ մի աչքի ընկնող բացառութիւն չէ կազմում, ինչու չէ կարողանում մի հակառակ հոսանք ներկայացնել: Ընդհակառակն, մենք տեսնում ենք, որ արտասահմանեան և տեղական ուսանողութեան մէջ չը կան որոշ, խիստ սահմանագծեր, կարծես ամենքը ձուլված են մի կաղապարի մէջ: Մնում է, ուրեմն, որոնել ուրիշ, ընդհանուր պատճառ և դա այն միջավայրն է, ուր մեծանում է ուսանողութիւնը և ուր նա պիտի գործէ: Հասարակութիւնն է այդ միջավայրը.

Երիտասարդութիւնը—ամեն տեղ և միշտ երիտասարդութիւն է և նրան ուղղութիւն տալ պարտաւոր է այն հասարակութիւնը, որ ծնել է նրան. իսկ եթէ հասարակութիւնը անբաւական է իր երիտասարդութիւնից, նշանակում է, որ նա ինքն իրանից է անբաւական. նա չը կարողացաւ լուրջ հիմունքներ դնել երիտասարդ սերունդի մէջ: Երիտասարդութեան հարկաւոր են ազնիւ, գաղափարական ղեկավարներ, համոզված, սրտով մաքուր, սիրող ղեկավարներ: Եւ եթէ երիտասարդութիւնից մի քանիսները հակված են դէպի թղթախաղը և այլ զուարճութիւնները—մեղը նրանց մէջ չէ, այլ այն քանի մէջ, որ նրանք ղեկավարներ չունեն:

Հասարակական պարտաճանաչութիւնը, ի հարկէ, կուղղէր ուսանող երիտասարդութեան քայլերը դէպի իդէալական գործունէութիւն. բայց քանի որ չը կայ այդ պարտաճանաչութիւնը, քանի որ ինքը, հասարակութիւնը իր կրթված մասով խրված է մտաւոր դատարկութեան, եսամոլութեան և կենդանաբանական հասկացողութիւնների մէջ, ով պէտք է ոգևորի երիտասարդ ուսանողին, ով պէտք է նրա վրա մի հսկող, պահանջող և խիստ կօնտրոլ հաստատէ: Դրութիւնը տրագիկական է դառնում մանաւանդ այն պատճառով, որ հասարակութիւնը չունի իր մէջ բարձրանալու, բարեկարգվելու ձգտումներ. նա չէ կարող վերածնվել և այդ վերածնութեան բարերար հոսանքը նրա մէջ պիտի մտցնէ հէնց այն ուսանող երիտասարդութիւնը, որ ինքն էլ կարօտ է ղեկավարների, ուղղութեան: Ահա մեր ժամանակների կատարեալ անօգնականութեան, անկարողութեան պատկերը:

*

Ի դէպ, ռուսաց մամուլի մի այլ օրգան չոշափում է մի ուրիշ կարևոր հարց, որ վերաբերում պիտի նահանգ դառնար, կառավարութիւնը չէր ուզեր ընդունել զայն, որովհետև ամեն նահանգ իրաւունք ունի իր ուզած ամուսնական օրէնքները քուէարկել: Ամենը գիտէին, թէ Եութահյի բնակչաց մեծ մասը մօրմօնական է, հետևաբար լաւագոյն կը համարուէր, բազմակնութիւնը արգելելու համար Եութահը Ուաշինկթընի կենտրօնական կառավարութեան տակ պահել: Այն ատեն մօրմոն եկեղեցւոյ (?) պետը հնարք մը մտածեց, նոր յայտնութիւն մը ստացաւ երկինքէն, որ բազմակնութիւնը կարգելէր. այդ յայտնութիւնը հրատարակեցին ամեն տեղ: Եութահը անկախ նահանգ դառնալու ուրիշ ըմբռնութիւն չունէր: Միացեալ-Նահանգաց պաշտօնեաները դուրս գալէն յետոյ, Եութահցիք իրենց ուզածները ըրին, կամաց կամաց մոռցվեցաւ յայտնութիւնը, բազմակնութիւնը սկսաւ տարածուիլ և այսօր բազմակին մարդ մը քոնկրէսին ներկայացուցիչ կընտրվի:

Այս առաջին քայլն է, կըսեն, բազմակնութիւնը պաշտօնապէս ճանչնալու: Խնդիրը շատ կնճռոտ է. անկախ նահանգ մը իրաւունք ունի իր ուզած մարդը ընտրել քոնկրէսին համար: Եթէ քոնկրէսը չը հաւանի զայն իբր ընկեր ճանչնալ, այն ատեն նահանգը անկախ լինելէ պիտի դադարի, և թերևս քաղաքային պատերազմ առաջ գայ: Բայց ամերիկացիները կատղեր են. կը սպառնան Ռոպէրթսը ծեծելով Ուաշինկթընէն վռնդել, հոգ չէ թէ արդիւնքը ինչ կը լինի: Լրագրաց մի քանի թղթակիցներ Եութահէն կը գրեն, թէ մօրմոնականութիւնը սպառնալիք մ'է արևմտեան նահանգներուն. աշխատասէր, չարքաշ, խնայող մարդիկ են մօրմոնները, մի քանի տարուն միջոցին անապատները պարտէզներու վերածեր են, երկրին ամբողջ հարստութեան տիրացած՝ ամեն ասպարէզ կը խլեն ուրիշներուն ձեռքէն, իրենց դաւանակիցներուն անձնուէր, աղքատութիւնը անծանօթ կը մնայ մօրմոնի մը: Միւս կողմէն օտար դաւանանքի հետևողները խաբել, կողոպտել, նոյն իսկ սպանել շատ անվնաս գործ կը համարեն: Հալածանքէ, նախատինքէ ամփոփուած՝ իրենց մէջ բանակի կարգապահութիւն ունին. Եութահէն դուրս Արիզոնա, Այովա, Միսուրի և շրջականները ամեն տեղ ցրուած կը բազմանան օրէ օր. աղքատներ, յուսահատ մարդիկ գունդագունդ կը դիմեն և կընդունուին գրկաբաց: Մօրմոն եկեղեցին օր մը թերևս հարաւի սեռերուն խնդրոյն պէս խնդիր մը յարուցանէ: Թղթակից մը կըսէ, թէ բազմակնութիւնը ամենևին չեն ծածկեր հիմա, ինչպէս առաջ, կը յիշէ նշանաւոր ազդեցիկ մօրմոններ, որ 5, 6, 10, մինչև 15 կին ունին, մէկ «առաքեալ» մը 7 կին և 35 հատ զաւակ ունի, որոնց համար զատ դպրոց մը կը պահէ. եթէ այս հաւատարմութեամբ աճեն, օր մը Ամերիկան ալ չը պիտի բաւէ ասոնց:

Մօրմոնները կը հաւատան «անձնական յայտնութեան». ամեն մարդ կրնայ հոգիով ներշնչուիլ և Աստուծոյ հետ ուղղակի յարաբերութիւն ունենալ կամ պատգամ ստանալ. պատգամներու տեսակէտն գուշակելով՝ յարաբերութիւնը աւելի սատանայնին հետ ըլլալ կերևի: Երբեմն հոգին կըսէ՝ «գնա, այս ինչ կինը առ». մարդուն մէկը այսպիսի յայտնութիւններու շնորհիւ 35 անգամ ամուսնացեր է: Բազմակնութենէ զատ մօրմոններուն կրօնական միւս դաւանանքը տխմարութեան և ապշութեան հաւաքածոյ մէ: Իրենց աստուածաշունչը գրված է եղեր Մօրմոն անուն արարածէ մը և թաղված բլուրի մը քով: Ճոզէֆ Սմիթ անուն առաջին «առաքեալը» և մօրմոններու հայրը աղօթքներով այդ գիրքը գտեր է, թիթեղի վրա նշանագրեր, որ Աստուծմէ ղրկված՝ մասնաւոր ակնոցներու օգնութեամբ կրցեր է կարդալ: Գրքին պարունակութիւնն ալ պակաս տխմար չէ: Բաբելոնի աշտարակաշինութենէն մարդիկ եկեր են Ամերիկա, զարմանալի անուններ ունեցող ցեղեր, որոնց սերունդէն եկեր է Նոր Աշխարհի մարգարէն: Պէտք է ըսել թէ այս աղանդին մէկ մասը բազմակնութենէ կը խորշի, և բաժնուած է միւսէն. ասոնք ալ իրենք զիրենք վերջին օրերու սուրբերը կը կոչեն և աստուածաշունչի վերջին գիրքը շատ կը կարդան: Ցայտնութեան հանելուկները և հաշիւները կը կարդադրեն:

Անցեալ տարի մարդ մը այդ հաշիւներէն Ցիսուսի գալուստը կը սպասէր. գեղեցիկ առաւօտ մը ինք և իր հարիւրաւոր ընկերները ճերմակներ հագած, աչքերնին վեր յառած՝ սպասեցին Քրիստոսի գալստեան, որ, ինչպէս գիտէք, իր ժամադրութիւնը չը պահեց...

—

Կաթոլիկութիւնը ուրիշ հարց մէ Միացեալ-Նահանգաց մէջ. պապական եկեղեցին, թէև հա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Նամակ Ամերիկայից)

—

Բոստոն, փետրվարի 28-ին

Ժամանակին Կովկասցի երիտասարդ մը կըսէր թէ՝ կը ջանայ ամերիկեան կրօնքը ուսանել. արևելցի մը համար շատ հետաքրքրական զբաղում մը պիտի լինէր այս, եթէ միայն մէկ մարդու մը կեանքը շատ կարճ չը դայ հազար ու մէկ տեսակ դաւանանքները քննելու, որոնց շատերը անծանօթ են նոյն իսկ տեղացիներուն. այս է պատճառը, որ ստէպ լրագրութեան մէջ տարիներէ վեր գոյութիւն ունեցող դաւանանքի մը վրա կը լսենք իբրև վերջին նորութիւն:

Վերջերս շատ կը խօսուի մօրմոնականութեան վրա: Եութահ նահանգէն քոնկրէսի ներկայացուցիչ ընտրվել է Ռոպէրթս անուն մօրմոնական մը, որ երեք կին ունի: Մօրմոնները բազմակնութիւնը աստուածային պատուէր մը կը համարեն: Ուաշինկթընի մէջ մեծ իրարանցում կայ. մեծ յուզում կայ մանաւանդ կանանց քլիւպներու և ընկերութեանց մէջ. եանքի տիկինները նախատինք կը համարեն իրենց երկրին և քաղաքակրթութեան, որ բազմակին մարդ մը իբր ներկայացուցիչ քոնկրէսում աթոռ ունենայ: Խնդիրը միայն ընկերական կամ ընտանեկան չէ: Երբ Եութահ պիտի նահանգ դառնար, կառավարութիւնը չէր ուզեր ընդունել զայն, որովհետև ամեն նահանգ իրաւունք ունի իր ուզած ամուսնական օրէնքները քուէարկել: Ամենը գիտէին, թէ Եութահյի բնակչաց մեծ մասը մօրմոնական է, հետևաբար լաւագոյն կը համարուէր, բազմակնութիւնը արգելելու համար Եութահը Ուաշինկթընի կենտրօնական կառավարութեան տակ պահել: Այն ատեն մօրմոն եկեղեցւոյ (?) պետը հնարք մը մտածեց, նոր յայտնութիւն մը ստացաւ երկինքէն, որ բազմակնութիւնը կարգելէր. այդ յայտնութիւնը հրատարակեցին ամեն տեղ: Եութահը անկախ նահանգ դառնալու ուրիշ ըմբռնութիւն չունէր: Միացեալ-Նահանգաց պաշտօնեաները դուրս գալէն յետոյ, Եութահցիք իրենց ուզածները ըրին, կամաց կամաց մոռցվեցաւ յայտնութիւնը, բազմակնութիւնը սկսաւ տարածուիլ և այսօր բազմակին մարդ մը քոնկրէսին ներկայացուցիչ կընտրվի:

Այս առաջին քայլն է, կըսեն, բազմակնութիւնը պաշտօնապէս ճանչնալու: Խնդիրը շատ կնճռոտ է. անկախ նահանգ մը իրաւունք ունի իր ուզած մարդը ընտրել քոնկրէսին համար: Եթէ քոնկրէսը չը հաւանի զայն իբր ընկեր ճանչնալ, այն ատեն նահանգը անկախ լինելէ պիտի դադարի, և թերևս քաղաքային պատերազմ առաջ գայ: Բայց ամերիկացիները կատղեր են. կը սպառնան Ռոպէրթսը ծեծելով Ուաշինկթընէն վռնդել, հոգ չէ թէ արդիւնքը ինչ կը լինի: Լրագրաց մի քանի թղթակիցներ Եութահէն կը գրեն, թէ մօրմոնականութիւնը սպառնալիք մ'է

վում է դարձեալ ինտելիգենցիային։ Ինչպէս յայտնի է, կայ մի ընդհանուր կարծիք թէ ինտելիգենցիայի թիւը շատ է մեծանում, թէ ինտելիգենտ ոյժերը եղած պահանջից անց են, ապա ուրեմն և աւելորդ մնացածները պիտի պրոլետարիատ կազմեն։ Ի՞նչ է դրա պատճառը,—միթէ այն, որ բարձրագոյն ուսում ստացողների թիւը չափազանց շատ է, հետևաբար և պէտք է պակասեցնել այդ թիւը։ «Трудовая помощь» ամսագրի մէջ շատ գեղեցիկ կերպով ապացուցված է, որ, ընդհակառակն, այդ թիւը չափազանց չէ և եթէ ինտելիգենտ ոյժերի աւելորդութիւն է զգացվում, այդ բոլորովին ուրիշ երևոյթից է առաջանում։ Այն երկիրներում, ուր աւելի քիչ է զարգացած կուլտուրան, ինտելիգենտը ասպարէզ ունենալ չէ կարող։

Աղքատ կլիմատը կարողութիւն չունի լաւ վարձատրել փաստաբանի աշխատանքը, իսկ կարողութիւն ունեցողները քիչ են և դրանք էլ արդէն փաստաբանութեան սոված ներկայացուցիչների ձեռքն են ընկել. անկրթագէտ մարդը չէ կարող կարդալ հրատարակվող գրքերն ու լրագրները. կրթութիւն չը ստացածը չէ կարող հետաքրքրվել գրականութեամբ, աղքատը միջոց չունի բժիշկ հրաւիրելու և ստիպված է դիմել «ջարրայնի», աւելի շատ է հիւանդանում և մեռնում. միջոց չը կայ դեղորոցներ բաց անելու և ժողովրդական ուսուցիչները չունեն տեղ և մի կտոր հաց։ Այստեղից պարզ է, որ եթէ փաստաբանը, գրականագէտը, բժիշկը կամ ուսուցիչը ուտելու բան չունեն, այդ առաջ է գալիս ոչ թէ նրանից, որ շատ մրցակիցներ կան, այլ այն պատճառով, որ նրանց աշխատանքի արտադրութիւնները, բայի անհնար փոքրամասնութիւնից, ոչ ոքին մատչելի չեն տգիտութեան պատճառով։ Ու պարզ է, որ գործի այս դրութեան մէջ որքան էլ պակասեցնես ինտելիգենցիայի թիւը, որքան էլ դժուարացնես նրա աճումը, սահմանափակելով համալսարանները մտնելու հնարաւորութիւնը, ցաւին ճար անել չես կարող, որովհետև ցաւի պատճառը գտնվում է ուրիշ տեղ—անթիւ անկրթագէտ և աղքատ մասսաների մէջ, որոնք անտես են անում ինտելիգենտի աշխատանքը ակամայ և ոչ թէ այն պատճառով, որ այդ աշխատանքը չափազանց շատ է։

Ժողովրդական կրթութիւն տարածելը—ահա այն փրկարար միջոցը, որ կօգնէ ազգաբնակութեան ապատվել աղքատութեան և տգիտութեան ճիրաններից. այն ժամանակն էլ ինտելիգենտը վարձատրութիւն կը ստանայ իր աշխատանքի համար և կը գտնէ գործելու լայն ասպարէզ։

ՍԱԿԱՒԱԶՈՒՐ ՏԱՐԻ ԿՈՎԿԱՍՈՒՄ

«Недѣля» շաբաթաթերթի այս տարվայ № 5-ի մէջ տպված է այս վերնագրով մի յօդուած, որ պատկանում է հեղինակաւոր անձի, Նորերս վախճանված Նիկ. Ալ. Դինդելշտեդտի գրչին։ Հեղինակի վարած բարձր պաշտօնը (գիւղատնտեսութեան տեսուչ երկրագործութեան վինիտրութեան) հեռու է կացուցանում նրան որ և է շուտափոյթ, ևս առաւել անարդար, կողմնակալ դատողութիւններից։ Անկարելի է չնորհակալ չը լինել այն ժամուլից, որ զետեղում է այդպիսի յօդուածներ իր էջերում, յօդուածներ, որոնց նպատակն է ծառայել երկրի արդարացի պաշտպանութեան գաղափարներու աղդեցութեան տակ, իր արտաքին երևոյթը փոխած է քիչ մը, բայց իր իսկութեամբ օտար տարր մէ. կը խորհին շատ մը եանքիներ՝ մէկը որ կրօնաւորի մը հրամանով պէտք է մոռնայ իր ընտանիքը, հայրենիքը և նոյն իսկ կռուի անունց դէմ, չը կրնար ապահով քաղաքացի մը լինել։ Զապականութիւնը սակայն մեծ քայլեր կառնէ, ամեն ջանք ի գործ կը դրվի քաղաքական աղդեցութիւն ձեռք բերելու. նահանգներու մէջ կը ճգնեն պապական ծխական վարժարաններու հաստատել կառավարական նպաստ և վկայականներու վաւերացում ընդունել։ Ամերիկայի մէջ գոյութիւն ունի ամերիկեան պաշտպանողական ընկերակցութիւն ըսուած միութիւնը, որոյ նպատակն է կռուել պապականութեան և մասնաւորապէս կաթոլիկ ծխական դպրոցներու դէմ, որոնք կառավարական ձրի վարժարաններէն շատ ստորին են և կդերին ազդեցութեան տակ նախապաշարումներուն բոյներ լինելէ զատ ուրիշ պաշտօն չունին։ Այս երկու ուժերու կռիւը շատ ծանր է. երբեմն անկարգութիւններ ալ տեղի ունեցան և մարդիկ ալ սպանուեցան. եթէ պապին հաւատացածին պէս Ամէրիկան կաթոլիկ եկեղեցոյ գիրկը պիտի դիմէ օր մը, այդ գրկախառնումը վախնամ շատ արիւնոտ լինի։ Վատիկանն մեծ խնամ կը տանի ամերիկեան պապականներուն, ամեն պարագայի տակ ողջոյններ կը ղրկէ «մեծ հասարակապետութեան»։ Անցեալները քաղաքիս մէջ սինեմատոգրաֆով պապին օրհնութիւնը կուտային ամերիկացոց.

հանչներին։ Զուրը մեր երկրի դաշտային մասերում անագին տնտեսական դեր է կատարում և նրա վրա միշտ դարձրած է եղել երկրի կառավարութեան ուշադրութիւնը։ Այդ մասին հետաքրքիր ընթերցողը կարող է շատ բան գտնել Քաջբերունու «Ճանապարհորդական նամակներում» («Փորձ» ամսագիր), նմանապէս Ց. Աթաբէկեանի գրուածքից («Արարատ», Միաբանի խմբագրութեան ժամանակ)։ Քիչ չէ գործել և ժողովրդի ստեղծագործական միտքը, որ տուել է մի շարք գեղեցիկ, նպատակայարմար և արդարացի սովորութիւններ, որոնց մասին շատ անգամ «Մշակի» էջերից իր գաւառական նշանաւոր նամակներում զրուցել է պ. Ս. Ղորղանեան, նոյնպէս պ. Ս. Եղիազարեան թէ «Մշակում» և թէ առանձին գրքում (Сельская община въ Закавказьи)։

1890 թւի դեկտեմբերի 3-ին հրատարակված օրէնքի նպատակն էր կանոնաւորել և առաջ մղել ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող ինստիտուտը, ջրաբաշխական գործը, և հետաքրքիր ընթերցողը կարող է ամբողջովին ծանօթանալ նրա հետ օրինագրքի XII հատ. 2 մասում Уставъ Сельс. Хозяйства (1393 թւի հրատ.) 119—152 յօդուածներից։

Ահա պ. Դինդելշտեդտի յօդուածը։ Ներկայ ամառը (1898) շատ սակաւաջուր էր Անդրկովկասի համար։ Սկսած 1891 թւից, երբ մեր երկրում մտցրվեցին «ջրաբաշխական հաստատութիւններ», ոչ մի տարի չէ զգացվել ոռոգման ջրի այնքան պակասութիւն՝ ինչպէս անցեալ տարի։

Ջրաբաշխական հաստատութիւնների նպատակը, ինչպէս ասված է օրէնքում, գլխաւորապէս նրանում է կայանում, որ միջոցներ գտնվեն ոռոգման արխերը կանոնաւորելու և բազմացնելու ու տեղական ժողովրդական կարգերը ջրից օգտվելու գործում պահպանելու, կարգեր, որ խանգարվում են միայն ջրի պակասութեան պատճառով։ Բայց ոչ այս, ոչ այն նպատակները չիրագործվեցին. ոռոգման համար ջուրը նոյնքան սակաւ է՝ ինչպէս առաջ էր, իսկ ժողովրդական սովորութիւնները՝ ջրից օգտվելու գործում՝ բոլորովին քայքայվել են։

Ջրի քչութիւնը այս տարի առաւել պարզեց ժողովրդի սովորութիւնների խանգարման վնասակարութիւնը. 1890 թւի դեկտեմբերի 3-ի օրէնքի համաձայն՝ ջուրը պակասելիս պիտի համապատասխան չափով քչացնել և ամեն բաժին ունեցողի մասը. ով ստանում էր երկու «քաշ», ջրի նուազելուց յետոյ ստանում էր մէկ «քաշ», մէկ ստացողը՝ կէս և այլն։ Այդպէս է ասում օրէնքը, այդպէս է և գրած։ Բայց իրօք գործը այդպէս չէ կատարվում, և ջուրը մէկից խլում են միւսին տալու համար։ Այդ անկանոնութիւնը մտցրել է ջրաբաշխական կառավարութիւնը։ Օգտվելով այդ կարգով՝ միրաբները հաշիւներ են տեսնում իրանց թշնամիների հետ, կամ ինչպէս ժողովուրդն է ասում՝ այրում են իրանց հակառակորդներին, այսինքն ոչնչացնում նրանց ցանքսերը։ Շարուրի-Դարալագեազի անագին ջրաբաշխական շրջանում այդ երևոյթը առաւել նշմարելի էր։ Մի քանի գիւղեր (Քարաբուրջ, Զէյվա, Մախտա) ջրի երես չեն տեսել—մի մուռանաք, յուլիս ամսում—երեք շաբաթով, մինչդեռ աղաթի համաձայն ամառը ջրի իրաւունք չունեցող գիւղեր (օր. Քեարիմ-Բէկլուն) օգտվել են այդ ժամանակ երկու անգամ։ Ամէն, աղաթը վերջացել է այն օրից, երբ հակառակ օրէնքի, ջրի կառավարութիւնը իրացրել են ինժէներ—գիւղավիկները, կառավարութիւնից հեռացնելով հասարակութիւնը։

Այդպիսի սակաւաջուր տարիները, ինչպէս ներկայ տարին, միրաբների համար նոյնն են եղել՝ ինչպէս խօլերային տարիները զգաղ չինովնիկների համար։ Ժողովրդից անօրէն կերպով փող կորզելը, որ չոչնչացրեց նոր մտցրած օրէնքը՝ առաւել սաստկանում է այդ տարիներում։ Քերթում են ոչ միայն միրաբները, այլ և ջուրվարները, անգամ «ընտրվածների խորհրդի» անդամները, որոնք, ինչպէս յայտնի է՝ գործում են կօլէգիալ։ Այդ խորհուրդներից մէկը (Կովկասում գոյութիւն ունեն 50 հատ) որոշել էր վերցնել 15 ռուբլի իր ջուր բաց թողնելու ամեն մի որոշման համար և այդ տուրքը կոչել էր «Ֆինտովա (?) փուլ», այսինքն ջուր բաց թողնելու վճար, մի տուրք, որ օրէնքը չէ թոյլ տալիս և որի գործադրութիւնը անյայտ է։

Նոյնպէս չէ կարելի ուշադրութիւն չը դարձրել և մի ուրիշ անախորժ երևոյթի վրա.—դա տեղացի ջրաբաշխական վարչական անձինքների բազմացնելն է։ Մինչև դեկտեմբերի 3-ի օրէնքը մտցնելը՝ ամբողջ Անդրկովկասում կար ոչ աւելի քան 10 միրաբ և մօտ 100 անձ նրանց ձեռքի տակ ծառայողներ, որոնք և տանում էին գործը։ Այժմ միրաբների թիւը տասնապատկվել է, նրանց ձեռքի տակ գտնվող ջուվարների թիւը 20 անգամ շատացել է և դեռ ստեղծվել է մի ամբողջ լեգէոն (մօտ 400 անձ) «ընտրվածների խորհրդի անդամներ»։ Հողային բերքերով ջրաբաշխական պաշտօնեաներին վարձատրելու դեղեցիկ սովորութիւնը գրեթէ թողնված է (նոյնպէս հակառակ օրէնքի), և ժողովրդի բեռը այդ պաշտօնեաներին պահելու համար նշմարելի չափով աճում է։ Գանձակի ամբողջ նահանգում, ուր կայ միայն մի (?) բաւական մեծ գետ, Թարթառը, իսկ մնացածները ներկայացնում են չորացած հեղեղատներ, որոնք լցվում են ջուրը հալվելուց՝ առաջ կար 3—4 միրաբ։ Այժմ այդ նահանգի միայն մի մասում, երկու գաւառում կայ 14 միրաբ, 63 խորհրդի անդամներ, 294 ջուվար։ Բագուի նահանգի նոյնպէս երկու գաւառում նշանակված են 14 միրաբ և 34 խորհրդի անդամ։ Երևանեան նահանգի երկու գաւառում կայ 20 միրաբ, մօտ 70 հողի խորհրդի անդամներ և ոչ պակաս քան 200 ջուվար։ Բայց այդ բոլոր նահանգներում և՛ առաջ կային միրաբներ. իսկ բանը նրանումն է, որ ջրաբաշխական կառավարութիւնը այդ պաշտօնական անձերը ստեղծել է և այնտեղ, ուր երբէք նրանք չեն եղել և որ իսկի օրէնքն էլ չէ պահանջում (օրինակ Իմէրէթում, Վրաստանում, Դաղստանում)։ Խօսք չը կայ, որ ցանկալի է որքան կարելի է շուտ դադարեցնել տեղացի ջրաբաշխական պաշտօնեաների թւի աճելը, որ օրէնքի դէմ է և ազգաբնակութեան նիւթական ակնյայտ վնաս. դրա մասին պիտի հոգան ոչ միայն կովկասեան իշխանութիւնները, որ հսկում են ոռոգման գործին, այլ և դա գեղեցիկ և օգտակար նիւթ է ամեն տարի Թիֆլիսում հաւաքվող ինժէնէր-գիւղավիկների ժողովների խորհրդածութիւնների համար։

Պետրոս Զաքարեան

ՆԱՄԱԿ ՇՈՒԼԱՒԷՐԻՑ

—

Փետրվարի 27-ին

Մեր գաւառի բազմաթիւ տեղերից հասած լուրերից երևում է, որ ծաղիկ հիւանդութիւնը երեխաների մէջ էպիդէմիայի բնաւորութիւն է ստանում։ Հիւանդացողների թիւում նկատվում են հասակաւորներ։ Հիւանդութեան տարածելուն նպաստում են մանաւանդ թուրքերը, որոնց ոչ մի կերպ չէ կարելի հասկացնել ծաղիկ կտրելու բարերար ազդեցութիւնը. նրանք ամեն կերպ աշխատում են ծածկել հիւանդութիւնը, որպէս զի տեղական իշխանութեան ականջը չը հասնի։ Ցանուտերերի իսկական պարտականութիւնն է յայտնել գաւառապետին հիւանդութիւնը երևալուն պէս, բայց թուրք տանուտէրը ջուրը կընկնի, այդպիսի քայլ երբէք չի անի։ Ծաղիկ կտրողներ, բացի այն ֆելդշերներից, որոնք գաւառական բուժկի տրամադրութեան տակ են դրված, կարելի է բացարձակ ասել, չը կան։ Ֆելդշերներն էլ ոչինչ չեն անում, կամ եթէ գործում էլ են, այն էլ այնպիսի տեղեր, ուր իրանց անգործութիւնը կարող է հէնց իրանց վնաս բերել։ Շրջել գիւղերը, ստիպել ժողովրդին և իրանց ձեռքի եկած օգնութիւնը նրանց անել,—հեռու է նրանցից։

Հիւանդութիւնը ծածկելու կամ անուշադրութեան թողնելու մէջ հայերը պակաս չեն թուրքերից։ Մեր գաւառի շատ հայաբնակ գիւղեր, յետ ընկած—խուլ անկիւններում ընկած՝ զուրկ գաղափար անգամ չունեն ծաղիկ կտրելու մասին, իսկ իմացողներն էլ, մանաւանդ պառաւները ծաղիկ կտրելը համարում են «ծաղկի հրեշտակին» բարկացնել...

Շուլաւերում գոյութիւն ունեն մի քանի «փաչեր» ու ուխտատեղիի նման բաներ, որոնցից ամեն մէկը գիւղի ժողովրդից, կամ, ճիշդը խօսենք, պառաւներից մի մի լեգէոն հոլու հպատակներ ունի։ Հերիք է, որ մի որ և է տան մէջ երեխայ ծաղիկ ընկաւ, տան պառաւը իսկոյն «փաչն» է վազեցնում։ Տանում են շատերը հիւանդների հետ նաև առողջ երեխաներին և պարզ է, որ «փաչը» այդպիսով դառնում է վարակման մի բոյն և ծաղիկը այդ արհեստական միջոցով մեծ ծաւալ է ստանում։

Դէպքը բերում է մեզ յիշեցնել այդ «փաչերի» ոչնչացման մասին։ Դեռ 1887 թւին Արիստակէս եպիսկոպոսը, իր առաջնորդութեան օրով Շուլաւէր գալով՝ հաւաքել տուեց բոլոր «փաչերը», որոնք ինքն ըստ ինքեան ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ մի մի աւեարաններ և երբեմն էլ մի քանի քարի կոր մի «սուրբի» դերեզմանից վերցրած, տեղաւորեց դրանց եկեղեցում և արգելեց մեր քահանաներին այդ տներում «պաշտում» անել։ Պէտք էր լսել այդ խաչատէրերի պատմած առասպելները իրանց «փաչերի» վերաբերմամբ... Դրանք խաւարի իշխանութեան պատմութիւններն էին... Այժմ «պաշտումները»

պակաս։ Պոստոնի մէջ միայն ամեն կիրակի տասնվեն աւելի ժողովներ կան քաղաքին տարբեր մասերու մէջ. ունկնդիրներու մեծ մասը կիներ են, զղուտ և դիւրահաւան։

Կրթութիւնը կրնայ ջնջել նախապաշարումը։ Արևմուտքէն մէկը կը գրէ թէ—մօրմոնականութեան ամենէն ջերմ պաշտպաններէն և հետևողներէն ոմանք բարձր կրթութիւն ստացած կիներ են, ոմանք նոյն իսկ բժիշկ և «փաստաբան. Արևելքի մէջ «հաւատքով բժշկողներու» «քրիստոնէական գիտականներու» ու ամեն տեսակ տրխմար հաւատքներու հաշիւը չը կայ։ Նիւ-Եորքի մէջ կին մը կը մերժէր իր հիւանդ զաւակին բժիշկ բերել, աղօթքը ամենէն ազդու դեղը կը համարէր։ Քանի մը ամիս առաջ Լօնդոնի մէջ մեռաւ ամերիկացի նշանաւոր թղթակից և հեղինակ Հարօլդ Ֆրէդէրիք, որոյ կեանքը հասարակ բժշկական խնամքով կարելի էր փրկել. բայց պարոնը ինքզինքը աղօթքի հաւատացող կանանց խնամքին յանձնեց և իր կեանքովը տուժեց։ Մահ, հիւանդութիւն, ցաւ չը կայ կըսեն, այս աղանդաւորները, միայն մենք այնպէս կը խորհինք. եթէ չը խորհենք, ամեն բան կարգին է. օրինակ, եթէ գլուխդ կը ցաւի, խորհէ թէ չի ցաւիր և ամեն բան կանցնի և այլն։ Ասոնք են քրիստոնէական գիտունները «Christian scientist», արդարև ճշմարիտ գիտութիւն... այս աղանդին հետևողները շատ բազմաթիւ են հարուստ և կրթեալ դասակարգին մէջ։

—

Կրօնական տարօրինակութեանց վրա գրած

ատեն կարելի չէ չը յիշել ամերիկացի արժանի Ինկրսոլը, որոյ անունը հմանիչ է անաստուածութեան հետ։ Այս մարդը տարիներէ ի վեր անկրօնութիւն կը քարոզէ նահանգաց ամեն կողմերը. ուր որ երթայ ահագին բազմութիւն մը կը խանուի զինք լսելու. իր ճարտասանութիւնը, սուր հեգնութիւնը անդիմադրելի հրապոյրներ են նոյն իսկ շատ բարեպաշտ մարդոց համար։ Իր քարոզները կամ, լաւ ևս է ըսել՝ դասախօսութիւնները կրօնական և ընկերական հարցերու մասին տետրակներու ձևով կը կախուին և շատ կը սպառվին։ Կրօնաւորներու ցոյց տուած ատելութենէն և գործածած լեզուէն դատելով Ինկրսոլը շատ կարող և ազդեցիկ մարդ մ'է։ Ֆրանսիացի գրող մը՝ Մաքս Օրէյլ, զինքը ժամանակակից ամենէն մեծ ամերիկացոց կարգը կը դասէ։ Սատանայի վրա տուած վերջին քարոզը լսելէ վերջ կը յիշեմ նշանաւոր քարոզիչ Մուտին, որ անցեալ տարի Պոստոնի մէջ կը պոռար՝ «Նկէք, որ ձեզ երկինք ղրկեմ»։ Երկու ծայրերը իրարու բաղդատելով մարդկային գաղափարներու և շահերու ինչ ահագին տարբերութիւն կը տեսնեմ. մէկը սատանան ու դժոխքը կրօնաւորներու մէկ խաբէութիւնը կը հրչակէ, միւսը հոգին սուրբ կը բաժնէ իր ունկնդիրներուն. երկուքն ալ խելացի, կրթուած ճարտասաններ են, բարձր իմացականութեան տէր, սակայն ինչպէս կարելի է հաւատալ թէ երկուքն ալ անկեղծ են...։

Արմէն

էլի շարունակում են, իսկ հլու պառաները ոչ մի միջոց չեն խնայում «ծաղկի հրեշտակին» հաճոյանալու և նրան չը բարկացնելու:

Միակ և նպատակայարմար միջոցը ազատվելու այդ անունով գեղեցիկ, բայց սարսափելի հիւանդութիւնից, ծաղկի պատուաստելու պարտադիր դարձնելն է ժողովրդի մէջ և դրան հակառակողներին պատասխանատուութեան տակ ձգելը:

Մեր լաւ միտն է 80-ական թուերի սաստիկ ծաղիկը, որ միայն շուլաւէրցիներից երեք հարիւրից աւելի երեխայ խլեց և այդ հանդամանքը պարզ երևաց 5—6 տարուց յետոյ, երբ ուսումնարան մտնող փոքրիկների թիւը զգալի կերպով ընկաւ—ուսումնարանում պարապ տեղ շատ կար, բայց երեխայ չը կար որ ընդունէին:

Առաջներս մեծ պաս է, քահանաների քարոզելու սեզօնը. վատ չէր լինի, եթէ նրանք եկեղեցու բեմից գոնէ սովորցնէին ժողովրդին ծաղիկ պատուաստելու օգտակարութիւնը... Ուրիշ տեղեր քահանան ինքն է երեխաների ծաղիկը կարում, իսկ մեր գաւառի քահանաներից շատ քիչ բան է խնդրվում: Ա. Ի.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէհրան, փետրվարի 15-ին

Յօգուտ Թէհրանի ազգային ընթերցարանի հանգանակված են Քիլանում, պ. Բ. Տէր-Սարգսեանի միջոցով, հետևեալ գումարները: Պ. պ. Յ. Ստեփանեանից 60 դրան, Ն. Միրզայեանից՝ 40 դր., Ս. Մնացականեանից՝ 40 դր., Հ. Աֆթանդիլեանից՝ 50 դր., Յ. Զազեանից՝ 50 դր., «Զուարճասիրաց» ընկ. 25 դր., Կ. Օհանեանից՝ 35 դր., Վ. Տէր-Յակովբեանից՝ 40 դր., Բ. Տէր-Սարգսեանից՝ 60 դր.: Գումար 400 դրան:

Ազգային «Ընթերցասիրաց» ընկերութեան վարչութիւնը իր խորին շնորհակալութիւնն է յայտնում թէ հանգանակող պարոնին և թէ նուիրատուներին: Ի դէպ. ընկերութեան հետ գործ ունեցողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով: Тегеранъ (Персія) Bibliothèque Arménienne, Darvaza Gazvin, Téhéran (Perse)

Նախագահ վարչութեան Գ. Պապեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» նախորդ հաւարներում մենք մի քանի տեղեկութիւններ հաղորդեցինք Վանի վիլայէթի հայերի և ասորիների մէջ տիրող սովի մասին: Գարունը հասնելուն պէս թշուառութիւնը փոքր ինչ կը թեթևանայ, որովհետև ժողովուրդը կարող է և բուսեղէններով կերակրվել: Բացի դրանից արդէն սկսել են նպաստներ հասնել Կ. Պոլսից: Իսկ թէ ինչ էր այդ տեղերի վիճակը ձմեռվայ ընթացքում, երևում է այն տեղեկութիւններից, որ կարդում ենք եւրոպական լրագրների մէջ: Ահա մի քանի նոր տեղեկութիւններ. «Եւրոպական հիւպատոսներից մէկը, որ պտտել է Վանի վիլայէթի Կարջիկան և Գառգառ գաւառները, հաւատացնում է, թէ տեսել է, ինչպէս շատ մարդիկ ամբողջ շաբաթներով մնացել էին առանց մի կտոր հացի. նրանք թխում էին կարկանդակներ խոտից և առոյտի հատիկներից. այդ հացից մի կտոր բերին նահանգապետի մօտ և նա զզուանքով շպրտեց այդ գարշելի կերակուրը: Այն բօսկէին, երբ ես գրում եմ այս տողերը, իմացայ, որ 7 ընտանիք, տղամարդ, կին, երեխայ, մղված սարսափելի յուսահատութիւնից, ընդունել են իսլամութիւն: Սովամահ լինելու վտանգին ենթարկված Վան քաղաքը լցվում է կանանցով և աղջիկներով, որոնք ապրուստի որ և է միջոց չունենալով, ծախում են իրանց ամօթը, իրանց պատիւը առաջին պատահածին, քաղաքի մուսուլմաններին, զինուորներին, մի խօսքով նրան, ով տալիս է մի կտոր հաց: Պէտք է աշխատել, որ գոնէ մնացածները չընկնեն այդ անբարոյականութեան մէջ: Մահը առատ հունձ է անում աղքատների մէջ. Վանի մօտ մի գիւղում հինգ հոգի միասին ուղղակի մեռել են քաղցածութիւնից: Այս տեղեկութիւնները ոչ մի կասկած չեն թողնում, որ հայ ժողովրդի վրա այժմ ծանրացել է մի նոր պատուհաս—սով. մարդիկ խումբ խումբ սովամահ են լինում կամ իրանց կեանքը ազատելու համար այժմ ինքնայօժար և ոչ բռնի կերպով մահմեդականութիւն են ընդունում:

—

Պետերբուրգի համալսարանում հետևեալ յայտարարութիւնն են կախել. «Պետերբուրգի համալսարանի խորհուրդը համոզված լինելով, որ համալսարանի և ուսանողութեան շահերը պահանջում են համալսարանական կեանքի բնական ընթացքի անյապաղ վերականգնումն, հրաւիրում է ուսանողներին սկսել իրանց համալսարանական սովորական զբաղմունքները: Խորհուրդը կարող է յայտնել, որ այն ուսանողների վիճակը, որոնց վերաբերութեամբ, տեղի ունեցած անկարգութիւնների պատճառով, ձեռք են առնված վարչական միջոցներ, կը մեղմացնվի: Դասախօսութիւնները համալսարանում վերըսկվեցին մարտի 1-ին:

—

Թիֆլիսի քաղաքային դուման իր վերջին նիստում պարտաւոր էր ընտրել քաղաքագլխի տեղապահ: Այդ պաշտօնը կատարում էր մինչև այժմ Ա. Իվանենկօ: Նիստի մէջ հարց յարուցվեց՝ թէ արդեօք Իվանենկօ զրկված է այդ իրաւունքից թէ ոչ, որովհետև նա հեռացվել է կառավարչապետի կողմից իբրև ուպրավայի անդամ, և ոչ թէ քաղաքագլխի տեղապահ: Քաղաքագլուխ Գ. Նեանդուլով, չը կարողանալով որոշ պատասխան տալ, տեղապահի ընտրութեան հարցը հանեց հերթական գործերի ցուցակից մինչև հետևեալ նիստը, երբ նա ժողոված կը լինի այդ առիթով հարկաւոր տեղեկութիւնները:

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ մարտի 6-ին լրացաւ նկարչութեան պրոֆէսսոր Յ. Այվազովսկու ծառայութեան 65-ամեակը:

—

Մարտի 7-ին, երեկոյեան 6 ժամին, Ելիսաւետօպոլի Նաբի-Աղալի գիւղում, որ գտնվում է Ելիսաւետօպոլից 6 վերստ հեռաւորութեան վրա, ինչպէս հաղորդում են տեղական լրագիրները, աւազակների հետ հրացանաձգութիւն ունեցած ժամանակ, աւազակներից սպանվեցին պոլիցիական պրիստաւ Զիկօվանի և ոստիկան Իսմայիլ: Անցքի տեղ գնացին հարիւր կազակներ:

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ լուր է պտտում, թէ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը վճռեց բժշկական ֆակուլտէտ բանալ Նովոռոսիսկի համալսարանում ներկայ տարվայ օգոստոսին:

—

«Русск. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ Մոսկվայում այս տարվայ յունիս ամսին կը գումարվի դրավաճառների և հրատարակիչների համագումար ժողով: Այդ ժողովում գլխաւորապէս քննութեան կենթարկվի գրավաճառային և հրատարակչական գործը կանոնաւորելու հարցը:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Մարտի 6-ին, ցերեկվայ ժամը ութին, կառապանի անզգուշութիւնից կառքի տակ ընկաւ նուխեցի Գ. Շահբաղեան. կառապանին ոստիկանութիւնը բռնատարկեց, իսկ Շահբաղեանին տարան հիւանդանոց, ուր երկու ժամից յետոյ նա մեռաւ: Գլուխը անիւի տակ այնպէս ջարդվել էր, որ բժիշկները տեսնելուն պէս յայտնեցին, որ յոյս չը կայ: Հրաւիրում ենք ոստիկանութեան ուշադրութիւնը, որպէս զի ուշ դարձնի կառապանների վրա, որովհետև այդ առաջին դէպքը չէ»:

—

ՁԱՌԹԱԼԱՑԻՑ մեզ գրում են, մարտի 3-ից. «Մեր քաղաքից մի վերստ հեռաւորութեան վրա գտնվող Ծիլիպան անունով թուրք գիւղում մի թուրք կին անցեալ փետրվար ամսի 20-ին չորս երեխայ ծնեց, որոնցից երկուսը տղայ է, երկուսը աղջիկ: Երկու տղայ և մէկ աղջիկ հինգ օրից յետոյ մեռան, իսկ մի աղջիկը մինչև հիմա էլ կենդանի է և առողջ»:

—

ՍԱՐԻՂԱՄԻՇԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 27-ին, տեղիս հիւրանոցի դահլիճում, թատերասէրների խումբը ներկայացրեց «Սամուէլ» և «Բռնի ամուսնութիւն»: Զը նայելով տեղի, թատրոնական զգեստների անյարմարութեանը և ուրիշ առարկաների իսպառ բացակայութեանը՝ անսպասելի աջողութիւն ունեցաւ ներկայացումը: Սա մի առաջադիմութեան քայլ էր՝ թատրոնական ամեն յարմարութիւններից զուրկ թատերասէրների կողմից, որ կատարեցին այս տարի թատրոնական բեմի վրա: Ամեն տարի Վարդանանց տօնին ներկայացնում էին այնպիսի պիէսաներ, որոնց մէջ կնոջ դեր չը կար. իսկ այս տարի բաղդ ունեցանք տեսնել թատրոնական բեմի վրա տիկին Հերիքնազ Տէր-Ղուկասեանին և Եսթեր Աղաջանեանին, առաջինին Տաճատուհու, իսկ երկրորդին՝ Սաթինիկի դերերում: Ո՞վ կարող էր երևակայել, որ Սարիղամիշի նըման փոքր և համարեա ամեն մի զարգացումից զուրկ գիւղը կարող է տալ թատրոնին կին-դերասանուհի, մինչդեռ աւելի խոշոր և զարգացած տեղերում աչքի է ընկնում թատրոնում կնոջ բացակայութիւնը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Վան, փետրվարի 9-ին

Ասկէ առաջ ձեզ գրածներէս՝ բաւական ծանօթացած էք Վասպուրականի ներքին կեանքին, որու վրա կոկորդիլոսեան արցունքներ կը թափեն մեր թթու ազգասէրները: Այդ արցունքի պատճառն դաւանափոխութիւնն է, որուն կը դիմէ թշուառ հայ ժողովուրդը՝ չի ժեռնելու համար: Բնական է, որ այս դարուս մէջ դաւանափոխ եղողը կարևորութիւն չի տար դաւանանքի խորութեան կամ տարբերութեան, և աչքը յուսալից ապագայի մը վրայ կը սևեռէ՝ նորէն իր մայրենի եկեղեցւոյ գիրկը դառնալու համար: Այժմ մեր ազգային ջղերը իրենց պատրիարքովն ու վարչական մարմիններով իրար կանգնին ու կաչխատին՝ այս հոսանքին առաջն առնելու. սակայն ըստ իս անօգուտ և մինչև իսկ ծիծաղելի կը լինին, քանի որ ընտրած միջոցներն շատ ողորմելի, շատ խեղճ ու կրակ է: Այս մասին բաւականանամ միայն մի օրինակ ցոյց տալով: Մեր առաջնորդարանն այս Ծննդեան տօնի առթիւ դրամ բաժանեց աղքատներու, սակայն հազիւ կարողացան մարդագլուխ մէկ զուրուշ տալու—(8 կոպէկ)... Ահա այս է մեր պատրիարքարանի ձեռք առած ազդու միջոցը: Միւս կողմանէ ամբողջ Վասպուրականը յանձնած են անկարող անապատականի մը (անապատ կասուին՝ Վանայ ծովի մէջ եղած կղզիները), Ստեփան վարդապետի մը, մինչ հոգեականները ունին ուսեալ, զարգացեալ և կառավարելու ընդունակ վենետիկցի առաջնորդ մը:

Երկար կը լինէր մերոնց պակասութիւններու և անոնց առաւելութիւններու թուումը, միայն բաւականանանք ըսելու թէ՝ երբ չունինք ոչ նիւթական և ոչ ալ բարոյական ոյժ, ուրեմն բոլորովին վնասակար է մեզ կռուի ելնել ուժեղներու հետ, զի գուցէ հետևանքը ազգային սարսափելի երկպառակումն լինի և Պոլսոյ հասուսնեաններն ու հակահասունեանները յիշել տայ: Կաթոլիկ հայոց առաջնորդ հ. Անտոնը տամինիկեան «Պեռերու» հետ խորհրդակցելով՝ իր առօրեայ գործերը կը կարգադրէ, և պէտք է ասել, որ պրոպականդայի աշակերտները բաւական ճարտիկ են, և եղուիտութեամբ կը վարուին իրենց բոլոր գործերու մէջ: Ամեն ճիգը կը թափեն իրենց ներքինը դաւանափոխութեան մէջ ցոյց չը տալու, այլ մարդասիրական գործի և քրիստոնէական պարտք կատարելու քողին տակ ծածկել ամեն բան: Սակայն ինչ որ ընեն, ինչպէս ալ որ վարուին, միշտ անախորժ հոտ մը և կասկածելի վարմունք մը ունին, մանաւանդ այն պատճառով, որ ինքզինքնին շրջապատած են այն տեսակ անձնաւորութիւններէ, որոնց մասին իրաւամբ քամահրանք մը ունի ժողովուրդ: Այդ տեսակ անձնաւորութեանց կարգէն են գլխաւորապէս տխրանուն «Բիւզանդիոնի» տխրատած աշխատակից Մարկոս Նաթանեանի եղբայրներն ու ազգականներն: Հ. Անտոնը սկսած է կրթական գործին քիչ շատ հոգ տանել. որքանոց մը ունին, որու մէջ կան 70-ի չափ երկսեռ որբեր, ասկէ զատ դպրոցներ բանալ տուած է Կորդար Թաղին մէջ և Աւանց, Կուռուպաշ և Խառակոնիս գիւղեր. մեր լսածին համեմատ, եկեղեցի և թէ դպրոց պիտի բացուին քաղաքի մէջ, Արարք ու Այեղեանց թաղերուն մէջ ևս: Ստոյգ աղբիւրներէ կը տեղեկանանք, որ այժմ Վասպուրականի մէջ քսան հազարէ աւելի հայեր՝ կաթոլիկ դարձած են:

Ֆէլիքս Ֆօրի մահուան առթիւ, տեղւոյն Տօմինիկեանց մատրան մէջ հոգեհանգիստ կատարվեցաւ ամսոյս 10-ին, ուր ներկայ էին քաղաքային և զինուորական փաշաներ, ռուսաց, անգլիացոց և պարսից հիւպատոսներն, բողոքակնաց միսիոնար մր. Բէյնօլդս, մեր առաջնորդական տեղապահ Ստեփան վարդապետ և իր քաղաքական ժողովոյ անդամներն: Եկեղեցիէն վերջ շնորհաւորութիւնք եղան նոր նախագահ Էմիլ Լուբէի ընտրութեան առթիւ:

Հացի դինը օր օրի վրայ կը բարձրանայ. այս շաբթուն 50 դուրուշէն 70-ի բարձրացաւ. ժողովրդական վիճակը խիստ յուսահատական է, գործեր և առևտուրը բոլորովին դադրած են: Եթէ կառավարութիւնը պէտք եղած միջոցները չառնէ, գուցէ քիչ ժամանակէն հացի դինը 100 դրուշի բարձրանայ: Վահէ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ղազվին, փետրվարի 18-ին

Շնորհիւ «Էնզէլի-Ղազվինեան» խճուղու, որը պիտի շուտով վերջանայ, Ղազվինը դառնում է անցուղարձի մի կենտրոն: Մինչև այժմ այդ գծի վատութեան պատճառով, Թէհրան գնացողներից շատերը անցնում էին Մազանդարանի վրայով, բայց այդ անյարմարութիւնն արդէն վերացվեց: «Էնզէլի-Ղազվինեան» գծի մշակները այս օրերս աշխատում են քաղաքիս դրան մօտ և այն էլ բաւական ժրաջանութեամբ: Մի քանի ամիս ևս, և անա գիծը պատրաստ կը լինի: Քաղաքումս ոչ ոք այնքան մեծ չափով չօգտվեց այդ գծից, որքան քաղաքիս հայ-վաճառականները, որոնք իւրաքանչիւր տարի մօտ մէկ միլիոն պուդ քիշմիշ, բամբակ և նուշ են արտահանում Բագու, Աստրախան, Նիժնա և Մոսկվա:

Այդ գիծը, որ կենդանութիւն տուեց մեր քաղաքին, կարծես մոգական դաւազանով ազդեց և տեղիս անշարժ հայերի վրա: Մի քանիսի մէջ միտք յղացաւ դպրոց և ուսումնարան ունենալ: Դպրոցի շէնքը, եկեղեցուն կից, արդէն պատրաստ էր: Ուսուցիչ հրաւիրվեց և դասախօսութիւնը սկսվեց 1898 թուի սեպտեմբերից: Ընթերցարանի համար բաւական կլոր մի դումար հաւաքվեց, այն է 120 թուման, որի վրա աւելացնելով Թէհրանի մի խմբից ստացած 42 թուման, ուղարկվեց թերթերի և գրքերի համար՝ Կովկաս:

Բայց ինչ և տես, որ այդ յանկարծական-մոդական դաւազանով առաջ եկած շարժումը դատապարտված էր անմիջական մեռելութեան: Դպրոցի գործը կիսատ, ընթերցարանինը—համարեա դեռ չը սկսած և անա առաջ եկան մի մի իու

նուանակոչութեան օրը, պապը մտադրութիւն ունի հանդիսաւոր ժամասացութիւն կատարել ս. Պետրոսի եկեղեցում:

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ցովսէփ Եսախիմ: Մարտի 5-ին լրացաւ ունգարական հռչակաւոր ջութակահար Ցովսէփ Եսախիմի արտիստական գործունէութեան 60-ամեակը: Առաջին անգամ նա հրապարակապէս կոնցէրտին մատակարեց Պէշտում ինն տարեկան հասակում: Ապա կոնցէրտային ճանապարհորդութիւնները շուտով հռչակեցին նրա անունը: Եսախիմ նոյնպէս հռչակաւոր ժանկավարժ է, և համարեա բոլոր յայտնի ջութակահարները օգտվում էին նրա դասերից և դիմում էին նրա խորհուրդներին: Երեսուն տարուց աւելի է, որ նա Բերլինի կայսերական երաժշտական բարձր դպրոցի պրոֆէսոր և դիրեկտոր է: Որպէս կոմպոզիտոր Եսախիմ նոյնպէս նշանաւոր է: Մանաւանդ յայտնի են նրա ունգարական երգերը: Ցօբելեանի օրվայ համար Եսախիմի աշակերտը և բարեկամը, Անդրէաս Մոզէր, հրատարակեց մի ժանրամասն բրոշիւր, նուիրված իր մեծ ուսուցչի գործունէութեանը և ծառայութիւններին:

* * *

«Tägliche Rundschau» հետևեալ անէկդոտն է պատմում նշանաւոր գրող Ռուդիարդ Կիպլինգի մասին, որը, ինչպէս յայտնի է, անագին վարձատրութիւն է ստանում իր գրուածքների համար: Լրագիրներից մէկը հաչեց, որ Կիպլինգ մէկ շիլինգ է ստանում իւրաքանչիւր բառի համար: Այդ բանը կարդալով, անգլիական մէկ դէնդի իսկոյն և եթ մէկ շիլինգ ուղարկեց Կիպլինգին՝ խնդրելով նրանից ուղարկել իր պրոզայի նմուշը: Կիպլինգ ընդունեց այդ շիլինգը, և թղթի մի կտորի վրա գրելով «Շնորհակալութիւն» բառը, ուղարկեց այդ թղթի կտորը անգլիացուն:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

8 մարտի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնա այցելեց Կայսր Նիկոլայի որբերի ինստիտուտը:

ԿԱԼՈՒԳԱ: Նահանգապետի մօտ ժողով կայացաւ նահանգի զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներից: Հիմնվեց Կալուգայի Պուշկինեան մանաժողով, որը պէտք է ծրագիր կազմէ Պուշկինի ծննդեան հարիւրամեակը տօնելու համար: Որոշված է դասախօսութիւններ կարդալ Զատկի շաբաթ և Պուշկինեան տօներին: Ենթադրված է Կալուգայում մի տուն կառուցանել Պուշկինի անունով՝ կրթական նպատակներով. բացված է հանդանակութիւն Պուշկինի անունը յաւերժացնելու համար:

ԿՈՉԱՆ: Ուսումնարանական շրջանի հոգաբարձուի, համալսարանի տեսչի և պրոֆէսորների ու հանդիսականների ներկայութեամբ, մաղթանքից յետոյ, դրին նոր դիտարանի հիմքը՝ Կազանից 18 վերստ հեռաւորութեամբ, Բարձրադոյն հրամանով յատկացրած արքունական գետնի վրա:

ՊԱՐԻԶ: Լրագիրներում տպված է հեռագիր Տուլօնից, որի մէջ ասված է, թէ անցեալ գիշեր հրացան են արձակել այն պահապանի վրա, որը կանգնած է եղել Բօմօն աշտարակում գտնվող վառօդի պահեստի մօտ, քաղաքի դռներից 400 մետր հեռաւորութեան վրա: Ցանցաւորները փախան: Սկսված է քննութիւն, որն առ այժմ ոչ մի հետևանքի չէ հասցրել:

ՏՈՒԼՕՆ: Զինուորական իշխանութիւնները պաշտօնապէս հերքում են այն լուրը, թէ Բօմօնի աշտարակի մէջ գտնվող վառօդի պահեստի վրա յարձակում են գործել:

9 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Համալսարանի վարչութիւնը միջնորդեց անկարգութիւններին մասնակցելու համար արձակված 78 ուսանողների վիճակը մեղմացնելու մասին: Մինիստրը հաստատեց այդ միջնորդութիւնը: Այդ միջնորդութիւնը մի և նոյն ժամանակ և վերջնական դատավճիռն է: Բարձրադոյն հրամանով յանձնարարված էր վերականգնել կարգը համալսարանում: Բոլոր 78 արձակված ուսանողներին թոյլ է տրված կրկին մտնել համալսարան: Իրանց ոգևորութեան համար վնասված 78 ուսանողներից որոշված է 2-ին յանդիմանել և 3 օրով կաբցէր նստեցնել. մնացածներին յանդիմանութիւն կարդացին:

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ: Երէկ երեկոյեան Կիէվից եկաւ առաջին շոգենաւը: Նաւագնացութիւնը կարելի է բացված համարել: Եղանակը տաք է:

ՊԱՐԻԶ: Պատգամաւորների ժողով: Արէնբէրգ հարցապնդում է անում նորերս Բուրժում տեղի ունեցած երկու պայթումների և կատարված քննութեան հետևանքների մասին: Ֆրէյսինէ պատասխանում է, որ պայթիւնի պատճառը դեռ ևս չէ պարզված, բայց դէպքը չարամտութեան հետևանք չէ: Մինիստրը հրամանագրեց հսկողութիւնը սաստկացնել ամեն տեղ՝ այդպիսի դէպքերի կրկնութեան առաջն առնելու համար:

ՊԱՐԻԶ: Պատգամաւորների ժողով: Կլոդինոն չէ հաւատում, որ ստորջրեայ նաւը Ֆրանսիային առաւելութիւն տար օտար պետութիւնների առաջ: Լօկրուայի անհամեստութիւնը,—աւելացնում է նա,—կօգնէ Անգլիային սկսելու ստորջրեայ նաւեր կառուցանել: Լօկրուա պատասխանում է, որ ինքն ոչինչ անհամեստութիւն չարեց, և պախարակում է Կլոդինոնին այն բանի համար, որ նա փոքրացնում է ֆրանսիական նաւատորմի նշանակութիւնը պնդելով, թէ Ֆրանսիայի նաւատորմը առաւելութիւն չունի օտար պետութիւնների նաւատորմերից, այն ինչ մեր ստորջրեայ նաւը անհամեմատ գերազանց է իտալական և գերմանական ստորջրեայ նաւերից: (Զանազան շարժումներ): Ընդհանուր վիճաբանութիւնները աւարտված են:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ ցերեկվայ 4 ժամին և 15 րոպէին. Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 38 րոպէին դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 20 րոպէին. Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 52 րոպէին:

Մարդատար № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ երեկոյեան 10 ժամ 50 րոպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 5 ժամ և 9 րոպէին: Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 6 ժամ 10 րոպէին. Բաթում է հասնում առաւօտեան 7 ժամին:

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ 30 րոպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 30 րոպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս երեկոյեան 9 ժամ 15 րոպէին. Բաթում է հասնում ցերեկվայ 12 ժամ 59 րոպէին:

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 40 րոպէին. Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ 55 րոպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս առաւօտեան 11 ժամ 20 րոպէին. Բաթում է հասնում առաւօտեան 5 ժամ 42 րոպէին:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենեբական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒԲԿՈ—1¼—2¼ ժ. ներքին և միասեռական հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Ն. ՇՊԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), վենեբական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիլի, արեան, կաթի և այլն:
Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
105—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Վաճառվում է
ՆՈՐԵԿ
ՎԷՊ ԲԱԲԿԵՆՑԻ
Գինը 70 կոպէկ:
Հարցնել Կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում: (Ե. ո.) 4—10

Լոյս տեսաւ
Ց. ՊԵՐՈՆԵԱՆԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ա.
ԾԻԾԱՂ
(Հեղինակի պատկերով)
Հրատ. Գիւտ ա. քահ. Աղանեանց
Գինն է 1 բուբլի 25 կոպէկ
3—5

ԿԱՖԷ ԶԻԼԼԷՐ
(Café Siller)
Վիէննա, I. Laurenzerberg. մեծ և էլեկանտ կաֆէ, բազմաթիւ հայ և ռուս լրագիրներով. գալիս են բոլոր հայ և շատ օտարականներ: Ընտիր սուրճ և լաւ ծառայութիւն: 18—25

Հարկաւոր է
ՎԱՐԺՈՒՀԻ
Որը պէտք է կատարի դասատարակչուհու պաշտօն, աւանդելով երեխաներին հայերէն կամ մի այլ օտար լեզու:
Պայմանաւորվել ցանկացողները թող դիմեն Асхабадъ, Айрапету Тертерянцъ.
4—5

Կովկասի ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
գրադարան-ընթերցարանը
(Միջին փողոց, տ. Տէր-Ասատուրովի, Ադելխանեանի մագազինի գլխին), բաց է առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 5—9: Առաջարկվում են մայրաքաղաքների և տեղական բոլոր թերթերը: Մուտքը 2 կոպ., ամսով 40 կ. աշակերտներից կէս վճար: 16—50

Զգուշացէք կեղծումներից
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ,
Գ. Ֆ. ԻԻՐԳԷՆՍ
Ոչնչացնում է պեպկիները, սեւութիւնը, ցեղին բծերը, պուզիկները և պտուկները և ներգործում է աւելորդ քրտնելու դէմ: Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս առաջնակարգ անուշահոտ սապօն, բարձր արժանաւորութեան:
ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թվի համար:
Կտորի գինը 50 կ., ½ կտորի 30 կ.:
Ծախվում է բոլոր ամենալաւ դեղագործական մագազիններում և դեղատներում:
Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում: Դէպօ, Թիֆլիսում, Աղամուրովի մօտ, դեղագործական ապրանքների առևտրի Կովկասեան ընկերութեան մէջ, Մուրինովի և Գրիվնակի, պ.պ. Պոպովների և Արիստակովի մօտ:
(10, 25) 24—24

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ
ԼԷՕ
ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ
(Պատմական վէպ, 755 երես)
Գինը 1 ՐՈՒԲ. 30 ԿՕՊԷԿ (ոսկեկազմ 2 բուբլի)
Ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ—հեղինակի մօտ («Մշակի» խմբագրատանը) և Կենտրոնական գրավաճառանոցում: ՇՈՒՇՈՒՄ—Բագրատ Տէր-Սահակեանցի գրավաճառանոցում:
Հեղինակի հասցէն՝ ТИФЛИСЪ, редакція „Мшакъ“. 10—10

ՈՒՐԲԷՆ L'URBAIN
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ՝ ԿԵԱՆՔԻ, ԴՐԱՄԱԳԼԻԻ, ՕԺԻՏԻ, ՀԱՍՈՑԹՆԵՐԻ և այլն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ, առանձնաշնորհումներով՝ հիւանդութեան և աշխատելու անընդունակութեան դէպքերում, և մասնակցութիւն ունենալով զուտ արդիւնքի մէջ հէնց ապահովագրութեան առաջին տարուց սկսած: Գրասենեակը՝ Անդրկովկասի, Անդրկասպեան երկրի, Թուրքեստանի և Բուխարայի համար՝ գտնվում է Թիֆլիսում, Միքայէլեան փողոց, տուն Ամիրազովի № 103:
Գլխաւոր լիազօր՝ ԲԱԳՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՕՎԻՉ ՏԷՐ-ՄԱԹԷՈՍԵԱՆ
Տեսուչ՝ ՆԻԿՕԼԱՅԻ ԳԵՐԱՍԻՄՕՎԻՉ ՏԷՐ-ՄԱԹԷՈՍԵԱՆ
Տեղեկութիւններ և բրոշիւրները տալիս են ընկերութեան գործակալները կայսրութեան բոլոր քաղաքներում: (ամս. 10, 25) 17—20

Կենտրոնական գրավաճառանոցը
բաց է անում բաժանորդագրութիւն
Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ
„ԷՄՄԱ“
ընդարձակ վէպի համար, որ կը բաղկանայ 350—400 խոշոր երեսներից: Վէպի նիւթը եւրոպական հայ ուսանողների, այլ և մեր ներկայ հասարակութեան կեանքից է: Բաժանորդագրութիւնը արժէ 1 բուբլի, իսկ գիրքը լոյս տեսնելուց յետոյ կարժենայ 1 ր. 50 կ.: Բաժանորդագրութիւնն ընդունվում է մինչև մայիսի 1-ը: Բաժանորդագրութեան համար դիմել Կենտրոնական գրավաճառանոց: Тифлисъ, Центр. книжн. торг. Արտասահմանից՝ Librairie Centrale. Tiflis.
(չ.) 6—10

БЕРНДОРФСКІЙ МЕТАЛЛИЧЕСКІЙ ЗАВОДЪ
АРТУРЪ КРУППЪ.
ART. KRUPP BERNDORF
ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, ԿՈՒԶՆԵՑԿԻ ԿԱՄՈՒՉԻ ՎՐԱ
Առաջարկում է հիւրանոցներին և տնտեսութիւններին իր գործիքները
ՄԻԱՁՈՅԼ ՄԵՏԱՂԻՑ „ԱԼՊԱԿԱ“
Սպիտակ արծաթագոյն, բնական ձևով և ծածկված մաքուր արծաթի թանձր շերտով, նմանապէս ԽՈՀԱՆՈՑԻ ԱՄԱՆԵՂԷՆ, ՄԱՔՈՒՐ ՆԻԿԵԼԻՑ
1—10
(10—30)

Дозволено цензурою, Тифлисъ, 9 Марта 1899 г. Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул № 13.